

Հուշագիր

«Կլիմայական տեխնոլոգիաների հայկական ուսումնագիտական ցանց» (ՀայԿՏՈՒՑ)
հիմնելու վերաբերյալ

Հիմք ընդունելով ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության Ազգային մակարդակով սահմանված հիմնարար փաստաթղթերը, մասնավորապես՝

- Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումների փաստաթուղթը,
- Կլիմայի փոփոխության մասին ՀՀ երրորդ ազգային հաղորդագրությունը,

միաժամանակ, առաջնորդվելով «Տեխնոլոգիական կարիքների գնահատում և Կլիմայի փոփոխության տեխնոլոգիական գործողությունների ծրագրի» շրջանակներում կատարված «Տեխնոլոգիական կարիքների գնահատում՝ կլիմայի փոփոխության մեղմման համար», «Հարմարվողականության տեխնոլոգիաների առաջնահերթությունների որոշումը» և «Կլիմայական տեխնոլոգիաների զարգացման ու փոխանցման հայկական կենտրոնի և ցանցի (ՀայԿՏԿՑ) ստեղծումը» հաշվետվություններով, որտեղ զարգացվում և հիմնավորվում են կլիմայական տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման հայկական կենտրոնի և ցանցի (ՀայԿՏԿՑ) ստեղծման գաղափարները, ինչպես նաև տարբեր ոլորտներ ներկայացնող փորձագետների և շահառուների կարծիքները, կողմերը սույն հուշագրով հիմնում են «Կլիմայական տեխնոլոգիաների հայկական ուսումնագիտական ցանց» (ՀայԿՏՈՒՑ):

«ՀայԿՏՈՒՑ»-ի ստեղծման հիմնական նպատակն է՝ խթանել կլիմայական տեխնոլոգիաների զարգացման, փոխանցման ու ներդրման համագործակցության ակտիվացմանը, միաժամանակ կապ ապահովել համագործակցող կողմերի և «Կլիմայական տեխնոլոգիական կենտրոն և ցանց» -ի (ԿՏԿՑ) հետ:

«ՀայԿՏՈՒՑ»-ի գործունեությունը

1. «ՀայԿՏՈՒՑ»-ը գործելու է ՀՀ վարչապետի 2012թ. հոկտեմբերի 2-ի թիվ 955-Ն որոշմամբ ստեղծված ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի ընդհանուր ղեկավարության ներքո:
2. «ՀայԿՏՈՒՑ»-ը կամավոր և անվճար հիմունքներով ստեղծված կառույց է, որը բաց է բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ու անհատների համար:
3. «ՀայԿՏՈՒՑ»-ի քարտուղարությունը գտնվելու է ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում և գործելու է անվճար հիմունքներով:

Կողմերի ստորագրությունները

Հ/հ	Հաստատություն	Ներկայացուցիչ / պաշտոն	Ստորագրություն
1.	Երևանի պետական համալսարան	Մարատ Գրիգորյան / դեկան	
2.	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Պարույր Էֆենդյան / պրոռեկտոր	
3.	Հայաստան պետական ճարտարագիտական համալսարան	Սամվել Շահինյան / ամբիոնի վարիչ	
4.	Երևանի Հայրուսակ համալսարան	Անահիտ Հարությունյան / կառավարման խորհրդի նախագահ	
5.	Արցախի պետական համալսարան	Անահիտ Գրիգորյան / ամբիոնի վարիչ	
6.	«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	Ռուբիկ Շահազիզյան	
7.	Կրթության միջազգային ակադեմիա	Սուրեն Մամիկոնյան / տնօրեն	
8.	ԱԻՆ Հիդրոմետ ծառայություն	Գագիկ Սուրենյան / կենտրոնի պետ	
9.	Երևան ջուր ՓԲԸ	Արտաշես Աղինյան / հիդրոտեկրաբան	
10.	Գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ	Մարտուն Մաթևոսյան /	
11.	Ջրային, կլիմայական և ռեկրեացիոն ռեսուրսների Միջազգային գիտահետազոտական կենտրոն ՀԿ	Քրիստինա Հակոբյան / գործադիր տնօրեն	
12.	Հայաստանի անձավագիտական կենտրոն ՀԿ	Սմբատ Դավթյան / խորհրդի անդամ	
13.	Այգեստան համայնք, Արարատի մարզ	Սոկրատ Հովսեփյան / համայնքապետ	
14.	Կանաչ արահետ ՀԿ	Նունե Մարտիսանյան / նախագահ	
15.	ԵՊՀ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Կայուն զարգացման կենտրոն	Ռուբեն Մովսեսյան / կենտրոնի պետ	
16.	ԲՆ «Հիդրոտեկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Հովիկ Աղինյան / բաժնի պետ	

Հուշագիրը պատրաստվել է հայերեն և անգլերեն լեզուներով (յուրաքանչյուրից մեկ օրինակ, 2 էջ):

Ք. Երևան,
20.01.2017թ.

